Հովհաննես Թումանյան

Ժպտուն աչքեր

Դու մի՛ հավատա ժըպտուն աչքերին,
Շատ անգամ նըրանք ծաղիկներ են վառ՝
Բուսած կորըստյան անդունդի ծերին,
Միամիտ մարդկանց քաշելու համար:

Ահա պոետն էլ, պատրանքով հարբած,
Գերվեց մի անգամ ժըպտուն աչքերի,
Ու որքան տանջվեց, տառապեց խաբված,
Ու որքան սըրտում գանգատներ ունի...

Դու շատ մի՛ խաբվի ժըպտուն աչքերից,

Շատ անգամ նըրանք ծաղիկներ են վառ,
Ծըլում են սըրտի ավերակներից
Տըխուր հատակը ծածկելու համար:

Ահա պոետն էլ՝ տառապած մի մարդ,
Որ սըրտում էնքան գանգատներ ունի,

Բայց հաճախ էնպես ժըպտում է զըվարթ,
Ասես թե քեզնից բախտավոր լինի:

1894

Յատուկ Պոեմ